Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԱՐ. ՔԱՀ. ԺՈՒՂՈՒՐԵԱՆ

ԳԻՒՂԻ ԱՅՐԻՆ

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ
ԱԼԻՊՐԱՆԻԿ ԱՌԷՔ
ՋԻԳՐԱՆ ԵԱՂԱՐԵԱՆԻ
18 ՆՈՅԵՄ. 1918 Թ. ԹԻՖԼԻՍ.

«Ողբամուխիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին...»

Մ. Նալբանդեան

ԹԻՖԼԻՍ
Պրակ. տպար. Մ. Մարտիրոսեանցի։
Մկրտչեան փողոց № 81.
1902

Պ. Գրիգորի տէր Յովհաննէսեանցի
հրամամբ
ՅԱՐ. ՔԱՀ. ԺՈՒՂՈՒՐԵԱՆ
6 NOV 2017
891.99
Հ-97
5
15/28 1902 թ.

ԳԻՒՂԻ ԱՅՐԻՆ

1001
Հ318

«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին...»

Մ. Նալբանդեան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ֆ.Հ. Публичная Библ...
7/XI. 1922
ՄՈՍԿՎԱ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՓԼԻՍ
Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի:
Միքայէլեան փողոց № 81.
1902

20 JUN 2013

41160

Дозв. ценз. Тифлисъ, 2-го Августа, 1901 г.

Ա.

Մէջլում ապին հազար տարուայ մեռելների ետևից հասնելուց յետոյ, պարտքից աւել ոչինչ չթողեց խեղճ Սարգիւլի ու որբերի համար։

Գետնափոր և դատարկ խրճթի, «գորտան ընի» դրան առաջ Սարգիւլի այտերն ամեն օր այրւում էին ու այրւում սգի արցունքներից։ Բայց նրան մղկտեցնող սուգը չէթէ արդէն մղմուղ ընկած մեռած Մէջլումի համար էր այնքան, այլ միմիայն շնչով կենդանի իւր ջլբաց որբերի համար, որոնք մերկ ու քաղցած մահուան դուռն էին դիմում։

Կեանք հօ չէր, սև՛ օր, սև պատուհաս, որ չգիտեմ ո՞ւմ մեղքիցը քաշում էին դառն աղքատ որբիկները։ Նրանք, կարծես թէ չար բա-

ղէի սուր ճանկերի մէջ բլբլուած և կամ բունի մէջ անսնունդ մնացած ճնճղուկի ձագեր լինէին, այնպէս էին հանգել, հատել ու ցամաքել։ Ձունչներն էր միայն դուրս գալիս, և, եթէ քթներից բռնէիր, այն էլ պիտի կտրուէր։

Ուտելիքները ոչ համով ու հոտով խորոված էր և ոչ իւղած փլաւ. մի կտոր չոր ճաթ էր, այն էլ Աստուած գիտէր, թէ ով պիտի տար։ Մէջլումը չկար, որ յոյսն իւր կռան, մանդալի, բահի և կամ քընգի վրայ դրած՝ գնար շահով շէնացած և խիղճը մեռած վաշխառուից, մինին տասը տոկոս ետ տալով, ուրիշ աղքատների պէս պարտք անէր, բերէր նրանց կերակրէր, իսկ ինքը ծանր շահի տակ հեծեծելով, տնքար ու տնքար մինչի մահ գերեզման։

Դժուար բա՜ն, դժուար կացութիւն...

Մի թշուառ, մի անօգնական կինարմատ, վեց ազահացած որբ, ի՜նչ անէր։ Հակառակ բաղդի շնորհիւ ինքն էլ, Մէջլումն էլ որբ էին իրար պատահել, ամուսնացել. ոչ ազգական ունէին և ոչ մի սրտացաւ, որ սրտները թլկըտալիս կամ մի ամսան տաք կեերակրով և կամ մի պատառ հացով օգնութեան դային։ Մենակ մի ճախարակով և մի սանդերքով—սրա նրա մանածն անելով ու բուրդը գզելով, «էնքանի բողաղը ոնց պահէր և կամ լաչները նորէր»։

Ո՜հ, չեմ կարծում, թէ դժոխքի սատանաներն էլ այնքան անողութ գտնուէին, անարդէին, այնքան տանջէին նոյն իսկ մեղսալից մարդուն, որքան այն դառն աղքատութիւնը, որ էքացնելով անբաղդ այրուն, որի «ալրի պարկի փուշին» կտրուելուց բացի, ճաթի հացի փշրունքն էլ վաղուց էր հատել և անօթի թողել ագահացած որբերին, որոնք հացի պատառը տեսնելիս ուզում էին թէ իրանց մօրն ուտեն, այնպէս էին վրայ թափւում ու խլում միմեանցից։ Իսկ երբ այն պատառը կամ չէր ճարւում և կամ ուշ էր ձեռք բերւում, նրանց դրութիւնը տեսնողը, նրանց սրտին, աչք ու արտասուքին նայողն արդէն այլևս առանց լացի, առանց կարեկցելու չէր դիմանում։ Սառնասիրտ նկարագրել չի կարելի, թէ նրանք՝ թխսի շուրջը սպասող սոված, անկուտ ճուտերի նըման, իրենց անճար մօրն ինչպէս էին աղերսում։ Նրանց երկինք հասնող քաղցի ձայները, աւելին որ չասեմ, զգայուն սրտերի մէջ սրեր էին ցցում։

Նրանցից մինը մաղերը գզգզուած, շապկի միմիայն օղը շնքին, մնացած մարմինը բոլորովին մերկ, քեղքեղուած ոտներով պատի տակ կռթնած՝ աղի արցունք չափելով, մղկտում էր այս եղանակ։

—Վա՜յ, նանի ջան... վա՜յ, սոված եմ, վա՜յ...

Միւսը նոյն դրութեան մէջ երեսի վրայ գետին ընկած՝ նուում էր խիստ թլացած։

—Նանի, հա՜ց, հա՜ց, հա՜ց... սոված եմ, սոված եմ, վա՜յ...

—Աճի, բա հլէ սաղ օրը՝ սըհէ անօթի պտինը մնա՞լ,—յուսահատուած հարցնում էր երրորդը։

Չորրորդի ձայնն արդէն կորուել էր շատ լացից և հեկեկանքը հազիւ էր լսում։ Հինգերորդը՝ մի ձեռը ծոցում, միւսով աչքերը տրորելով, բոբիկ ոտքերը բարձրուքաշի անելով, հիւանդ ձագի նման խրճիթից հեռացած՝ արդէն դիմում էր հարևանի դուռը, թերևս նրանց երեխանց ձեռից ընկնող փշրանքներից կերակրուելու։ Իսկ վեցերորդը, որ տեսարանն աւելի սրտաճմլիկ էր դարձնում, հարամի տղրուկի նման մօր կրծքից կպած՝ ծծում, ցամաքեցնում, կռծում էր նրա առանց այն էլ ցամաքած, չոր տախտակ դարձած և հոգսերից ու հառաչանքներից մաշուած կուրծքը։

Բայց «մինթէ բարի ծնողն իւր հաց խնդրող որդուն քար և ձուկն ուզողին օձ կտայ» *։

* Ս. Աւետարանից։

Խեղճ այրին աշխատում էր անձը զոհել, միայն մի կերպ ապրեցնել, սովից ազատել նրանց արդէն վտանգի ենթարկուած կեանքը, քանի դեռ շունչը բերանումն էր։ Նա, երկու խան վարձատրութիւն ստանալու յոյսով, գնացել ուներների մէկից երկու սիւմակ բուրդ էր բերել մանելու. ուստի, արևը գլխին ընկած, քրտինքն ու աղի արտասունքն իրար խառնած, սիրտը լիքը, հոգին վշտացած, փաթիլները թրջելով, պտտում էր մանիչը, հայ տալիս կռներին և ջահրի տխուր ու կախարթիչ բռռոցի հետ ձայնն իրար գցած՝ խիստ մորմոքիչ եղանակով երգում, ողբում էր իւր խիստ ցաւոտ երգերը։

Օրն ու բիւթիւն մանմ, ջանս հանմ, բռռացնը՛մ
եմ ճահրս,
Ամա, վա՜յ գլխիս, ծո՞վ, ծովից էլ մեծ ա դահրս.
Տեղս դժա՜ր, տաշտս դարդակ, ա՜խ, ուր գնամ,
ինչ անեմ,
Էսքան եթիմն ես մի ճահրով ոնց պահեմ։

Մինն էրկունն ու իրեքը չեն խեղճերը,
Տես, տես. դժոխքից էլ վատթար ա հալները.
Վեց հոգին հարամու պէս Ջանիս թափուած,
Ղալով, մղկտալով, հա՜ց են ուզում, ով Աստուած։

Բայց, մանիչը ձեռից յանկարծ բաց թողեց այրին։ Լռեց (ջահրի) ճախարակի սուգն ու բռռոցը. նա, ըստ երևոյթին, կարծես յոգնեց

անդուլ մանելուց, բայց չէ, դարդերի ծովու-
թիւնից ուշքը թռաւ և ձեռքը թլացաւ։ Մի
առ ժամանակ մնաց արձանացած, պէլացած,
ապա դարձաւ իւր նուաղկոտած որբերին,
նայեց երկնքին ու չգիտեմ ինչ մրմնջաց, միայն՝
աղերսալից աչքերը շուտով երկնքից սարերին,
սարերից էլ ձգեց հեռու, հեռու տարածուած
դաշտերին, ուր ամենի արտում հնչում էր ման-
գաղը, երգում հնձողը և զնգում գերանդին,
ուր բաղդաւորների շարիշար դրած բարդերն
ու դէզերը ողջունում էին հանդին, իսկ նրա
որբերի դարին, Մէջլումի—տէրամեռ ծ'լաքը մի-
այն, դեռ էլի կծղում, դեռ էլի չորանում,
կոթնում, տափիցն էր կպչում. և, կարծես լե-
զու առած՝ վա՜յ տէր, վայ հնձող էր կանչում։

Ծ'լաքի տխուր, խիստ մորմոքիչ ու սրտա-
կտուր տեսարանն այրուն նորից հրդեհեց, նո-
րից արտասունքի փոխարէն չմշկուած, թռռման
աչքերից կայծեր ու քթէն մուխ արձակեց։

Այդ միջոցին մի ողորմած պառաւ, որ քա-
նի մի անգամ հացով ու մածնով քաղցած երե-
խանցն օգնութեան էր հասել, երկու դարու
հաց կռան տակը դրած շտապում էր դէպի
խրճիթը, որ մխիթարելով այրուողի սիրտը,
որբերին «անսաս անի», փրկի նրանց քաղցից։

—Ախճի, ա՛ խեղճ ու նաչար, էդքան որ

լաց ես ըլում, բա աչքերիդ ինչ ջուղաբ ես
տալիս, ուղում ես քոռացնես ու մի տուն քիւլ-
փաթդ դռներին թողաս։ Լաւ, լաւ, որդի, աչ-
քերդ սրբի ու ա՛ռ, էս հացերն էրեխանցդ տուր,
անսաս արա, մեղք են. վախիլ մի, Աստած իր
ստեղծածներին կորցնիլ չի...

—Է՛լ ոնց կորցնի, նանի ջա՛ն, եա՛նի սրա-
նից էլ աւել կորցնի՞ լ. հրէ, հրէ, հլա մի տէրը
մեռած արտիս մտիկ արա՛։ Վա՜յ, Մէջլըմ, քու
մէջքդ չկոտրի, էս ինչ հալի թողեցիր մեզ...

Ասում, արտասուում ու լքանալով լքանում
էր թշուառ այրին։

—Ախճի, դու հօ զոչաղ ես, էդ խսի՞ ես դհէ
էրեխայ դառել, ա՛ռ, ա՛ռ էրեխանցդ տուր, հերիք
ինչքան լաց ըլար,—քաջալերում էր պառաւը։

Օրհնուած պառաւի ձայնն Աստուծոյ ձայնի
նման հնչեց կարծես քաղցած որբերի ական-
ջին և նուաղկոտած տեղներից յարութիւն տուեց։
Նրանք ձայնը լսելուն պէս իսկոյն վերկացան
տեղներից և թաթերը պարզած, սոված գառ-
ների նման մօտենալով իրենց անբաղդ մօրը,
մի մի պատառ խլեցին և ագահութեամբ աչ-
ներն էլի ձեռքը յառած՝ սկսեցին շաքարի նը-
ման կծոտել ու կծոտել։

Սարգիսն արտասունքը սրբելով շնորհակա-
լութիւն էր անում պառաւին, որի հեռանալուց

յետոյ, մի պատառ էլ ինքը բերանը դրաւ և ապա դորակն ուսն առնելով, տխուր սրտով ու յամրաքայլ ուղղուեց դէպի աղբիւրը ջուր բերելու համար։

—Տղերք, մտիցս ընկնում ա, թէ հարցնեմ, էն խեղճ որբերին (որբ և այրին) եարաբ ընչով ա պահում, ընչով ա եօլա տանում էնքան քիւլփաթը,—այրուն ցոյց տալով, հարցրեց մէկը։

—Վալլահ, ես էլ չեմ գիդում, Ա՛րթին, զորթ ոնց ա պահում էնդադարի ըռէխը։

—Կարով, մանածով...

—Վայէ, զահրումար ըլի մանածի ու գզածի պահած էրեխէն, նրանցով էրէխի փոր կը կշտանա՞յ։

—Աստած վկայ, որ շատ դժար ա խըղճի բանը. տաշտումը հաց չունեցող տղամարդն էլ չի կարում էրկսի ու իրեքի բողազը պահի, ուր մնաց թէ էդ խեղճ ու նաչար կնիկարմատը։

—Մենակ բողազնին պահիլու դարդը խու չի, որ եսիրի թոկ ա դառել խըղճի վզին։

—Բաս։

—Գարտք էլ ունի, ու, էն անմրուաթն էլ՝ գլխին ամեն օր կրակ ա անում, թէ տուր։

—Արա ինչ ես ասում, գոռթ։

—Աստած վկայ, ասում են էլի բուշուկս կայ։

—Եանի էնքան եթիմների մեղքի մէջն ընկնելով, պտի առնի։

—Էդ ես միամիտ հա՜. տո էն խու ասել ա՝ հէնց որ գարու ծ՛լաքը հնձիլ, կասիլ տայ, պէտք ա գնամ գարին շափեմ ու հա՜ տանեմ։

—Գըլի՜, արա, եանի էդ լսիլու, հաատալու բան ա՞, որ ասում ես։

—Անմեղ չես հաատում. տասը մադու կըշտի՞ ա ասել։

—Գըլի՜, արա, բաս հըմանչում չի՞։

—Իսկի՜. հու քարը հու նրա սիրտը. հու կաշին, հու նրա իրեսը։

—Խի՜, Մարկոս ապի, բա դու գիտում չես, որ նրա ըրիսըմն ամօթ չկա՞յ։

—Ամօթ, խղճմտանք, որ ունենայ, թիւմանին տասը շահի, իրեք արասի շահ կառնի։

—Հա՜, հա՜. էլ ասում ես թէ ինչ անես. դա էլ Ղարինի պէս մնին տասն առնիլով, թամամ քանդում ա էս գեղը։

—Ո՜ւր ա, որ մինն էլ դուս գայ ու դրան շանասատակ անի. ա՜խ...

—Գեղը կդիմանայ, ոնչիչ. թող գնէ անի, վերև Աստած, ներքև գետինը կայ, Մէջլումի ուղտը հալբաթ մի օր էլ դրա դռանը կշոքի, առանց էն չի. մեռնեմ Աստու դիւանին։

—Տայ Աստած, տայ, որ մնի փոխանակ տասն ուղտ չոքի դրա որդկերանց դռան առաջը։

—Է՜հ, ապպէր, խրատում չեն, էլի։ Էդ ա-

նիրաւները. թող հէլ էն մնին շնըսատակ ա-
նիլուցն էլա վախենան. ամա որ վախըմ չեն։

—Խեղճ կնիկ, հրէ ջրիցը եդ ա գնըմ.
ողորմելին ջլիս հանգել, հատել ա, տենըմ էր։

—Բաս ինչ կլնի, մի ղոլից Գիգինի տղէն,
մի ղոլից էլ Զնթռէլսի տղէն ա նիղացնըմ
խըղճին։

—Վա՜հ, Զնթռէլսի։ Նրան ինչքա՞ն ա պարտ։

—Նրանից խեղճ Մէջլումը մի տարի էրկու
թաղար կորեկ էր վերկալել. չուել մահը, չորս
տարում վճարեց էրկու թաղար կորեկ, էրկու
թաղար էլ գարի ու էլի մնացել ա պարտ
տասը չանաղ գարի։

—Բա հըմի դա էնքան անողորմն ա, որ
էն տասը չանաղն էլ եթիմներիցը պահանջը՞մ ա։

—Օ՜, մի սև օձ դրա Զնթռէլս ճտովը փը-
թաթուի, դա Ղարի գէօռբագէօռիցն ու Գիգ-
նի տղիցն ցխտը գդալ էլ ուլել անօրէնն ա.
դրան դուք ինց էք ճանաչըմ, ես հլա վախըմ
եմ թէ տասի—տեղ տասնուհինգ պահանջի։

—Գըլի՜, արա էտ ի՞նչ անհոգին ա ըլել։

—Հա՜, եթիմներից, թէկուզ հէնց վեցն էլ
միասին կոտորվելիս ըլեն, էլի կառնի, չի
խղճալ։

—Չի՞ խղճալ, դրուստ ա, ամա ընչի՞ցը պը-
տի առնի. անբաղդների էլած-չէլածը մի պը-

ղինձ, մի սինի ու մի դոլչա էր մնացել, ընէ՞
հէնց ողորմածիկ Մէջլումի սաղիրիան վախտը
պուճախիցը դուս քաշեցին ու, թագաւորի խար-
ջի խաթեր, կիսագնու ծախեցին, կորցրին...
էն էրկու գարու ծլաքն էլ որ ունեն, ընդոնք էլ
չուել հնձելը ղշերի ու մկների կերակուր են
դառնալու։

—Դէ լաւ, ես խու ի՞մն ասեցի, դուք էլ
ձերը, թող ապրենք Աստուծով ու կտեսնենք
Զնթռէլսի * տղի անիրաւութինը։

Բ

Ինչպէս որ դաշտը մորեխի գնացած թըռ-
չունի քաղցած ճուտերը՝ բնի մէջ անհամբեր
իրենց մօր գալուն ու թռթռացին են սպա-
սում, ու, երբ նա մորեխը կտցին գալիս, ձա-
գերը կլափները միասին բաց կալած սխսուցն
են ընկնում՝ վրա թափուում նրան, կտցիցը մո-
ռեխը խլում, այնպէս էլ Մէջլումի որբերը,

* Զնթռէլս կնշանակէ անկարգ լայն բերան
ունեցող մարդ։

Մէջլումի ձագերն էին անում։ Նրանք էլ, երբ մօր վերադարձը նկատում էին սոված ձագերի պէս սկսւոցն ընկնելով, կամ ձեռքին, կամ կռան տակին և կամ փեշին էին նայում, որ տեսնեն, թէ արդեօք մի բան ճարել է իրենց համար։

Ջրի ճանապարհին Սարգիսի համագիւղացի հարսներից մինը խղճալով նրան՝ իր սկեսրից թագուն մի հաց և մի քանի կտոր պանիր էր բաշխել նրան։ Սարգիսն այդ ողորմութիւնը թագցրած իւր կռան տակ վերադարձաւ խրճիթը թէ չէ, որբերը գլխին հաւաքուեցին և իւրաքանչիւրը մի կտոր հաց ու պանիր ստանալով, ժպտալէն մէկը միւսին իւր բաժինը ցոյց տալով, սկսեցին ագահութեամբ ուտել և երբ կշտացան, այն ժամանակ միայն հեռացան և սկսեցին ուրախ խաղալ խրճթի շուրջը թափուած քարերի ու խճերի հետ, իսկ Սարգիսը նորից սկսեց դարդոտ մտքերի ծովն ընկնել ու ընկղմուիլ։

—Ա՜խ, ա՛ սար, ա՛ քարեր, ա՛ ձորեր, ընչի՞ էք սուս կացել, ընչի՞ չէք ասում, թէ ո՞նց անեմ, որ էն տէրամեռ էրկու դարուս ծ'լաքը հնձիլ տամ։ Ա՜խ, ո՞ւմ դուռը գնամ, ո՞ւմն աղաչեմ, ո՞ւմ ձեռը պաչեմ, ես ո՞ւմ ոտներն ընկնեմ, որ դարդիս դարման անի...

Հէ. կ՞որան, դարիքս կորա՜ն։ Էլ ճար չի

մնում, առաւօտը վաղ վեր կենամ, Էրեխանցս թաթիցը բռնեմ, գեղն ընկնեմ, սրա նրա դռանը սոված, գոմն արած կովի պէս բառանչեմ, ըստուր ընդուր պռնգնոտամ, բալքի ողորման, բալքի մի քանի հնձող տան,—մեն մենակ, ինքն իրեն խօսելով, Սարգիսը դիմում էր մթնին։

Երեխայքը տուն ժողովուեցին հետզհետէ և նիհար ու նուազ դառների նման աջ ու ձախ կարպետի վրայ թափուելով, նստեցին քնի մէջ։ Մուլքը պատեց շուտով և միջատներն ու գորտերն սկսեցին իրենց քստմնոտցն ու կռկռոցը։

Խեղճ այրին անվերջ մտածմունքներով, անսահման վշտերով լի և կիսատ-սրատ յոյսերով մտաւ խրճիթը, երեխանցն ուղղեց, ամենից փոքրին գիրկն առաւ ու կողքներին պառկեցնելով, չնայելով այնքան յոգնածութեան, քունն աչքերին ամենևին մօտ չէր գալիս։ Երեխայքը երազներումն էլ հաց էին խնդրում իրենց անբաղդ մօրից...

Գիրակի լուսացաւ գիշերը, որ այնքան դառն էր ու երկար աղքատի համար։ Առաւօտն արեւագալին այրին գլխի պատռոտուն փաթաթանով երեսը ծածկելով, ամօթխածութեամբ, մերկ մանուկ որբը գրկում հուլ տուած ու միւսներին ետևից արած, ակնածութեամբ և

անհամարձակ մօտեցաւ գիւղական ժողովին, խոնարհ գլուխ տուեց բիւրտ տանուտէրին ու քեռդխուդաներին և մի պատանու բերանով յայտնեց իւր աղերսագին խնդիրը, բայց դեռ չվերջացրած խեղճը, տանուտէրը կոպտաբար հարցրեց նրա թարգման պատանուն։

—Ի՞նչ ա ասըմ, ա՛րա, ընչի՞ հըմար ա եկել էդ ղանջըղը...

—Տանուտէր, ասըմ ա՝ իմ իրեսը քու ոտի տակը, վերև Աստած, ներքև դու, եթիմնիս մնացել են սոված, գարուս ծլաքնին էլ հընձելու, մրուաթ արա՝ մլքանի հնձող դուս արա, թող գնան Աստու սէրը հնձեն ինձ տան, որ քու գեղի անճար խեղճն եմ, հալրաթ՝ թէ մեռնիլ չեմ, սաղ կմնամ, քու լաւութինն էլ վրէս չեմ թողալ...

—Աղճի, բա հլէ էտքան շնրճուտերը ետեւիցդ արած ըտուր հըմար ես եկէ՞լ,—այրուն դառնալով, վայրենաբար հարցրեց նա։ Իսկ այրին ձեռը կրծքին դնելով, խոնարհ գլուխ տուեց նրան և նորից պատանու ականջին շշնջաց։

—Տանուտէր, ասըմ ա, հրման քեզ։

—Հա՛, շնորհակալ եմ դրա հրամանքեղիցն, ամա շատ բիմար կնիկարմատ ա։ Ախճի, տօ բիմար, դու որ ինձ ասըմ ես արտս հնձող ղրկի, ո՞նց ղրկեմ, քու արտի հնձիլը մգեար

թագաւորի կոռ ա՛, որ դամշին քաշեմ ու իրաւունք բանացնեմ։ Գեղ են, գեղական են, ինքդ գնա ղանչանք, պաղատանք արա, թէ կհնձեն, թող հնձեն, էլ իմ կուշտն ո՞ւր ես եկել,—սառնութեամբ պատասխանելով այրուն, դարձաւ դէպի գիւղի քահանան և նրա վկայութիւնը խնդրեց։

—Հը՞, էսպէս չի՞, տէր բաբա։

—Հրաման քեզ, բաս, տանուտէր, ճշմարիտ ես հրամարմ,—այս էլ եղաւ աւետարանի քարոզիչ կոչուած հօր պատասխանը։

—Դնա՛, գնա՛, այ քիրայ, ըսօրւայ օրն էն ով ա գժուել, որ իր ըշխատանքը թողայ ու քեզ համար հունձ դայ։ Էլի օրն ամեն մարդ իր գործին ա. դէ թէ տէրտէրն իրաւունք կտայ, թող գանք կիրակուց հնձենք արտդ։ Հը՞, տէրտէր իրաւունք կա՞յ։

—Ի՞նչ ես ասըմ, էրեխայ խու չես, Աստու կիրակին կոտրիլ կլնի՞. մեղք ա, անկարելի ա։ Երկրորդ յանցանքն աւելացնելով, մեր ժողովրդի սէր տէրտէրը, պնդեց, արգելեց բարեգործութիւնը և արտասունքն աչքերին յեղ դարձրեց յոյսը հատած խեղճ այրուն։ Եւ, երբ նա հեռացաւ անմխիթար, յետևից էլ այս նախատինքը կարդացին։

—Ը՛հ, ա՛նբան սատանի քած, դ՛էնա՝ ձեռդ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
Общая Библиотека
7/XI 1922
Ереван, Абовяна
Հ.Ս.Ս.Հ.

խալխին դէմ անելու տեղ՝ մի սիւրու (մի հոտաչափ) լակոտ ունես, վեկալ, հաւաքի, տար արտդ արա թող քիչ-քիչ քաղեն, էլի։ Ղանջղ, հալբաթ դա Սարմանց Գիւլչըհանիցը ազիզ կնիկ ա. հրէ անսաս էրէխէքը տարել արտն արել ա, ու, վուրհավուր քաղըմ, կիտըմ...

Բայց ինչ անէր անբաղդ այրին. իրրև կինարմատ հնձել, մանգաղ բռնել չգիտէր, տանուտէրը բաց էր ասել և տէր բարան էլ Գիղատոսի պէս ձեռները լուացել, անփոյթ հովուի նման հեռու էր կանգնել։ Գիւղական ժողովարանից երես դարձնելուց յետոյ, Սարգիւլը նորից փորձ արաւ դռնէ դուռը սրան նրան դիմել։ Սակայն, գիւղն անողորմ դարձաւ. ում աղաչում, պաղատում, ում դուռը բակխում, ոտքները համբուրել, գլխովը ման տալ էր ուզում խաչի մատաղացուի պէս, նրանից էլ նոյն տանուտէրի կոշտ ու կոպիտ պատասխանն էր ստանում։

—Ախճի, իրեսդ ջհուդի իրես չինած քանի դաս, քանի սեղ զահլաքիւշտ անես. մերը թողունք ու դանք քունը հնձենք. ղանջղ, մի տուն լակոտլուկոտ ունես, տար նի արա, թող քաղեն, էլի,—կրկնում էին նրան։

Արդարև, այնուհետև էլ ուրիշ հնար չէր մնում անճարի համար. այնպէս էլ արաւ։ Առաւօտները վաղ տրորելով որբերին, խորը

քնից վեր էր թռցնում, ուղած-մրած գարու հացերից մի մի պատառ թաթնելիս դնում, մի քանի կտոր ու փշրանք էլ պարկումը մէջքին կապում, ու, բորկոտն որբերին հաւի ձագերի պէս ետևից անելով, գնում էր Մէջլումի անտէր ծ'լաքը, և, Հռուլթի նման ձեռները քըսատերին ու փշերին տալով, երեխանց հետ միասին հասկ էր ժողովում նրանց պահպանելու և ամուսնու պարտքի «բուչուխը» վճարելու համար։ Բայց ասում էին. «ծիտն ինչ ա, թէ իր եղն ինչ ըլի». ինչպէս և, «կնիկն ինչ, թէ նրա հնձածն ինչ լինի». թէպէտ աջ ձեռն էր շարժում, բայց թւում էր թէ ձախ ձեռով է հընձում, այնպէս որ, մի ամբողջ շաբաթ անցնելուց յետոյ, կարծես արտը—ծլաքն էլի տեղը կանգնած էր, որովհետև հալից ընկած այրին էլ աւել ոյժ չունէր։

Շաբաթ երեկոյեան, Մէջլումի որբերը սաստիկ թուլացել, տգաթևել էին քաղցից։ Արտից տուն վերադառնալիս թլացած երեխայքը խաչքարի բաշում փչող թեթև քամուց անգամ ուզում էին թէ վայր ընկնեն։ Սարգիւլը տանը հաց չունենալուց բացի, յոյս էլ չունէր մի տեղից։ Նա բաշը դուրս գալուց առաջ կաբաւի ձորակի բերանից մի քանի թև փիփերթ էր քաղել, ժողովել և փեշումը փաթաթած բերում

էր որ խաչի, որպէս զի այդ երեկոյ երեխանցը նրանով մի կերպ «հօլա» տանի։

Սարգիսը խաչի բաշը դուրս գալով, յոգնածութիւնից, բլրի վրայ իջած թռչունների նման, իր որբերովը փոքր ինչ հանգիստ, շունչ առաւ։ Առաջին անգամ այն բարձր տեղից հեռւում նրա աչքովն ընկաւ մի սպիտակագգեստ ձիաւոր, որ ձին խաղացնելով դէմ յանդիման գիւղից գիւղ էր գալիս։ Սարգիսը նրան տեսնելուն պէս երկնքին նայեց և յուսահատ մրմնջաց.

—Ա՜խ, Աստած ջան, եարաբ էն ձիաւորիցն էլա մի հովութիւն պտի ըլի ինձ, թէ հէչ անմեղ ա գալի,—ասաց և իջան դէպի խրճիթը, որ աւերակի ու գերեզմանի տպաւորութիւն էր գործում մարդու վրայ իւր դատարկութեամբը։

Ձիաւորը գիւղը մտաւ։

Գ.

Միւս օրը կիրակի էր. առաւօտեան ժամաւորները եկեղեցուց դուրս եկան և ըստ սովորութեան ոմանք յենուեցին պատերին, ոմանք թառ-թառ եղան դոխաղների վրայ և ոմանք

էլ դուրս ածած կոճղերի ու քարակոյտերի վրայ նստոտեցին շարիշար։ Այն նիստի մէջ էր նաև սպիտակագգեստ ձիաւորը, որ Գ. գիւղի յարգելի ուսուցիչն էր. նա եկել էր Կ. գիւղումն էլ հայոց ուսումնարան բանալու երանելի խընդիրն արծարծի։ Բայց ուսուցիչն այդ մասին դեռ բերան չբացած, յանկարծ գիւղացիներից մինը ցաւագին բացականչումով ամենի, ինչպէս և պատուական ուսուցչի ուշադրութիւնը այրու վրայ դարձրեց։ Սկսուեց հետևեալ խօսակցութիւնը։

—Ո՜ւհ, մի դէնը մտիկ արէք, է՛, ա՛ խալտը, էն խեղճ որբերվերէն, հրէ-հրէ,—մատը նացոյց եղաւ նա քարքրուտ լանջին նայելով...

—Ո՜վվէ, եարաբ էն ո՞ւր ա գնում էն օրը կտրուած եսիրը։

—Էրկու խան գարի ա առել մանածով, շալակել տանում ա, որ ջաղացումն աղի,—յայտնեց մի ուրիշը։

—Վա՜յ. խեղճ կինարմատ, հրէ հրէ, համ գարու պարկն ա շալակել, համ էրեխէն, համ էլ էն նոր ոտն էլածի թաթիցը բռնել...։ Տանջանք ա էլի։

—Ա՛, քանի էրեխայ ունի, մի համբարեցէք հլա։

—Օ՜հ, Սիմոն ապի, էլ ասում ես թէ ինչ

անեմ. էդ անբախտի տանջանքին ու չարչարանքին իսկի դարման կա՞յ. էրէկ սաղ հանդը թամամ գերեզմանատուն էր շինել—ամեն մի հասկը պոկելիս էնպէս էր մղկըտում, էնպէս աղատ աղատ լաց լինում, որ մարդի սիրտ կրակ էր տալիս, էրում խորովում ու աչքերը փշերով լցնում։ «Վա՜յ, Մէջըմ ջան, էս ի՞նչ օրի, էս ի՞նչ հալի ենք». որ ասում էր ու աչքերը սար ու քոլին գցում, գլխին խփում ու մազերը ճեպռում, հէնց իմանում էիր թէ երկնքիցը վրէդ ծծումբ ա կաթում։ Նրա մեղքիցը, Նրա աղեկատուր ձէնիցն էլ չկարացի գիմացըմը խուրձս կապեմ, անգամս կալայ ու եալի էն ղոլն անցկացայ։ Վալլահ, ջհաննամը, թէ էս դժար մաջալին բանս մի օրով էլ յետ կընկնի, կիսատ արտս հէնց որ պրծայ, գնալու եմ մի օր էլա քէօմակ անեմ,—դառնօրէն նկարագրելով Սարգիսի սգալի հունձը, խոստացաւ այն ազքատներից մինը, որ շնչասպառ Մէջլումին վաշխառուի արտից տուն էր բերել։

—Ասըմ են խեղճ խամ կնիկը փորձել ա, որ մանգեղով հնձի առանց մատնոցի, կարացել չի ու տուել ա մատները կտրատել (խոզխոզել). նկատեց մի ուրիշը։

—Դու մատների կտրատելն ես ասըմ, էրեխանց ոտների տակն ասես, որ արևի տաքութեանից խաշուել, քաշին վերա կացել ու փշերից էնպէս քըրքրուել, որ առանց ջանը սռսռալու մտիկ անել չի լինըմ։

—Բա հիւանդացել չե՞ն։

—Բա ի՞նչ են արել. Ատուած ողորմի Սանամանց պառաւի մալքերի հոգուն, հիւանդներից էրկսին տարել՝ հրէ իրանց սրահըմը պահըմ ա, չուելը մէրները ջաղացիցը եդ գայ։

—Վալլահ, էդ պառաւը, որ լա՛ւ պառաւ ըլի, հէնց էն տարած էրկուսին էլա հոգեորդի (որդեգիր) վեկունի, մի բան որ՝ մի չոր գլուխ ա ու էնքան կարողութենի տէր։

—Վեկունի, լա՛ւ պառաւ ա, ամա ասգա-կանները թոռալ չեն, չիմ էլ աչքները տնկած ըսօր էգուց են անում, որ վախտին մեռնի, կարողութենին վրա՝ տան գիլանոնց պէս։

—Եանի իրան ձեռին չի՞, որ ուզենայ, կանի, էլի։

—Կանի, ամա մի օր չի անց կենալ, գլուխը թռցնիլ կտան, ես թէ չէ, կխեղդեն, կըսպանեն։

—Էհէ Սարգիս,—ծանրաբարոյ հայեացքով նկատեց մի ծերուկ,—պառաւին բան սովրացնելու տեղաք ընչո՞ւ չէք դուք քէօմակ ըլըմ, բա գեղ չէք. չէ՞ որ նա էլ ձեր գեղի խեղճն ա. ինձ էք մնըմ, ես խու էս ա ծերացել եմ, էլ

ձեռս մանգեղ չի բռնում։ Հէյգիտի հա՜, ափսո՜ւս մեր ժամանակ...

—Ապէր, զարմ ես ասում, համա ձեր ժամանակն էսքան ղըհար (հոգս) չի ըլել, է։ Ո՞նց անենք, լի օրն ամենքս մերն ենք հնձում, կիրակուց հնձիլն էլ մեղք ա. մի կնիկարմատի համար խու Աստուածադիր օրէնքը քանդելու չենք։

Ուսուցիչ Սիմոնը, որ լուռ լսում ու դիտում էր, այստեղ արդէն էլ չկարողացաւ տանել։ Քաղաքում կրթուած, բայց գիւղացի, գիւղի կարիքներին ծանօթ և գիւղատնտեսութեան սիրահար այն պատուական երիտասարդը, որ գիտէր մաճ բռնել, գութնաւորի հետ հօռօլ տալ, ցանել, հնձել և այլն, այնքան դառը նկարագրութիւններից մորմոքուեց, և, մանաւանդ, երբ յիշեց և կրկին մանրամասն կերպով լսեց Մէջլումի մահը և Սաքնի տղի անարգանքը, էլ չիմացաւ, թէ ինչպէս կրակի իւր աղնիւ սիրտը։ Նա Ղազարոսի գերեզմանի վրայ արտասուող Յիսուսի նման աչքերն արտասուքի կաթիլներով լցրած՝ սկսեց յուզուել ու խօսել մինչ այն աստիճան, որ գեղջուկներին էլ արտասուեցրեց։

Սուրբ գրքից նա մէջ բերելով Հռութի, Նաումի այրի հարսի խրատական պատմութիւնը,

հեշտ և հասկանալի լեզուով ուշքները կենտրոնացրեց Բաոսի բարութեան, բարեպաշտութեան, մարդասիրութեան և Աստուծոյ արդար վարձատրութեան ու յաջողութեան վրայ. ապա՝ ցոյց տալով գիւղական ամբոխի, մանաւանդ տանուտէրի ու տէրտէրի տգեղ և, Երիքովի ճանապարհին աւազակների ձեռքն ընկած վիրաւորի մօտից անցնող Ղևտացու ու քահանայի անպատուաբեր վարմունքի նման վարմունքը՝ դէպի անօգնական այրին, յիշեց ողորմած Սամարացուն, բացատրեց Աստուծոյ ս. պատուիրանի, օրէնքի բուն, խսկական նշանակութիւնը և քաջալերեց բարի լինել, բարի գործել, խեղճ ընկեր-հարևանին օգնելու ու տեսնելու համար աչքերը չփակել...

—Եղբա՛ր, ինչո՞ւ կիրակի օրը լաւութիւն անելը մեղք էք համարում.—բարձրաձայն և համարձակ գոչեց ուսուցիչը,—ինչո՞ւ դուք Աստուծու օրէնքը ծուռն էք հասկանում և հակառակն անում. մի՞թէ նրա բարկութիւնից ու արդար պատիժներից չէ՞ք վախենում...։ Նա այսօր ձեզ տուել է առատ արտեր, հանդ, անդաստան, առողջութիւն ու յաջողութիւն. ինչո՞ւ նրա աղքատին անօգնական էք թողնում, չէ՞ որ մի օր էլ կարող է ոչնչացնել ամեն ինչ և ամեն մէկիդ էլ այրի Սարգիսի օրը դգել...

Սրանից էլ մեծ մեղք, որ դուք այսօր պարապ-սարապ այստեղ ժողովուած՝ տեսնում էք էն խեղճ, անճար այրու տանջանքը, որբերի քաղցը, մերկութիւնը, հիւանդութիւնը, ու, դատարկ, մէջը փուչ օխտը հատիկ խօսքերով էք միայն կարեկցում, ցաւում նրանց վրայ։ Չէ՞ որ քաղցածին հաց, նեղացածին օգնութիւն, մերկին շոր է հարկաւոր և ոչ թէ լոկ ցաւակցութիւն և արտասունք...

«Ես կէս սրհաթ առաջ ձեզ հետ միասին կանգնած էի եկեղեցու ներսի պատի տակ, տեսնում էի, թէ դուք սուր-սուր քարերի վրայ (յատակին) ինչպէս էիք շորում, ծունր դնում, ձեռքներդ վեր բարձրացնում, աղօթում—երեսներդ քսում գետինը, սիւներն ու պատերը և խաչն ու Աւետարանը համբուրում մեղայ գոչելով։ Բայց ի՞նչ օգուտ այդ ամենից, երբ դուք ձեր տէրտէրի հետ միասին ոչ խաչի զօրութիւնն էք (հասկանում), իմանում և ոչ էլ սուրբ Աւետարանի քաղցրութիւնը հասկանում՝ Քրիստոսին խաչող ջհուդների պէս։

—Վա՜յ...,—վերջին խիստ խօսքերի վրայ բերանները բաց շշնջացին ամենքը։

«Վա՜յ» անելով մի զարմանաք. ով Քրիստոսի խօսքերը չի կատարում, նա էլ է խաչում նրան. քիչ համբերեցէք մտնեմ եկեղեցի և դուրս

բերեմ ձեր սիրով ու մեղայով համբուրած Աւետարանը ու տեսէք, թէ ի՞նչ է գրած կիրակի օրուայ մասին. տեսէք պարապ նստելն է կիրակի՞, թէ բարութիւն անելը»։

Նա շտապով մտաւ եկեղեցի, Ս. Աւետարանը գրկած դուրս բերեց և Մատթէոսի ԺԲ գլուխը բանալով, մի փոքրիկ յառաջաբանով սկսեց նորից։

«Ջհուդներն էլ էին ձեզ պէս սխալ հասկանում։ Կիրակի օրը ոչ կրակ էին վառում, ոչ եփում, ոչ հնձում և ոչ հաւաքում. մինչև անգամ, եթէ մէկի տունը կրակ էր ընկնում, չէին հանդցնում, թէ՝ մեղք ա, Աստուած ասել է, որ պէտք է կիրակին սուրբ պահել հանգստանալով։ Մի կիրակի օր Քրիստոսի առաջ կանգնած էր մի մարդ, որի աջ ձեռը քսից չորացել, անպէտքացել էր ու չէր կարողանում ոչ հնձել և ոչ փնջել իր օջախի, իր որդոց համար։ Յիսուսը խղճաց քսոտին և ամենի առաջ չորացած ձեռքն առողջացրեց։ Հրէաները, ջհուդները երբ տեսան, աղաղակեցին թէ՝ «մի՞թէ կիրակին կարելի՞ է կոտրել, ինչո՞ւ ես մեղք անում»։ Յիսուս պատասխանեց և հասկացրեց թէ՝ «կիրակին չէ՞ մարդու տէրը, մարդն է կիրակու տէրը». կիրակի օրը լաւ բան պէտք է անել և ոչ թէ չար. «կիրակի օրը մարդ չպէտք է կորցնել, պէտք է ապրացնել»։

Ս. Աւետարանի էս սուրբ խօսքերով, սիրելիք, Յիսուս մեզ չի՞ ասում, թէ հանգստութիւնը լաւ բան չի. ասում է՝ բարեգործութիւնը, աղքատին օգնելը, սգաւորներին մխիթարելը, հիւանդներին տեսութիւն գնալը և խեղճ այրու կըծ-ղած արտը հնձելն աւելի՞ լաւ բան է, քան թէ պարապ նստելը։ Լսեցիք, հասկցաք...»։

—Հրաման քեզ, վարժապետ ջան։

Ասում է.—«ով որ իմ խօսքը լսի, նա կապրի երկար»։ Դէհ վեր կացէք, մանկեղներդ հագրեցէք մի աւել մանկեղ էլ ինձ համար գտէք, որ միասին գնանք և Աստուծոյ խօսքը կատարենք, այրուն օգնենք և քաղցած եթիմներին ապրեցնենք,—ասաց նա զգացուած և առաջներն ընկաւ, ուղղուեց դէպի հանդը։

Հնձողները շուտով հաւաքուեցին և Սիմոն վարժապետի առաջնորդութեամբ մի ժամից յետոյ ոգևորուած երիտասարդների սուր մանգաղներն արդէն փայլում էին հանգուցեալ Մէջլումի ծ'լաքում։ Իսկ երեկոյեան, երբ այրին լքացած, ալրի պարկի տակ տնքալով, երեխան գրկած ջրաղացի կողմից խրճթի դիմացն էր գուրս գալիս, խրձան սայլերը կանգնած էին կալի ափին և Սիմոն վարժապետն ինքն էր դիզում որբերի գարին։

Այդ միջոցին երբ աչքը բարձրացրեց այրին

և տեսաւ Աստուծոյ ողորմութիւնը, ուրախութիւնից շշմեց, շփոթուեց, և, երազ համարելով տեսածը, մի առժամանակ դեռ չհաւատաց աչքերին, արձանացած մնաց. ապա սթափուելով մօտեցաւ կալին, պարկը մի, երեխան միւս կողմը նետելով՝ վազեց դէպի դէզը և կամենում էր համբուրել Սիմոն վարժապետի ոտները, իսկ նա, արտասուքի կաթիլները հազիւ պահելով, արգելում էր նրան։

—Թող, աղպէր ջան, թող որ համբուրեմ ոտքերդ. թող, դու իմ եթիմների Աստուածը, բարի հրեշտակն ես ըլել...,—ասում էր նա և խաչի մատաղացուի նման պտտւում դիզի շուրջը։ Այրին ճիգ էր անում համբուրել ձեռքերը։

Տեսարանը խիստ գթաշարժ էր...

Դ

Օրն անցել էր. Սիմոն վարժապետն էլ չը կարողացաւ ուսումնարանի հարցի մասին խօսել իւր սիրելի հայ հասարակութեան հետ։ Լենդիրը մնաց միւս կիրակուն, որովհետև երկու-

շաբթի դաշտային եռող աշխատանքների պատճառով գիւղում մարդ գտնել չէր կարելի. ժողով գումարել, համախօսական թուղթ կազմել էր հարկաւոր: Նա ջանք արաւ իւր այդ օրուայ օրինակելի բարեգործութիւնը միայն կատարեալ անել: Նա շտապեց լծկան ունեցող մի քեադխուդի մօտ, հանեց իւր ուսուցչական աղբատ գրպանից մի քանի կոպէկ վարձ առաջարկեց նրան, որպէսզի հինգ օրով մի լուծ եզը տայ այրուն կալսելու իւր գարին: Քեադխուդան ամաչեց կոպէկները վերցնելուց և խոստացաւ կատարել նրա խնդիրը. այնուհետև նա հեծաւ իւր ձին և խաղաղ սրտով վերադարձաւ Գ., դասերը շարունակելու:

Այրին երկուշաբթի ուզովի լծկաններով իւր հարիւր ու ութսուն գարու խուրձը կալսել սկսեց և երեք օրից յետոյ վեց թաղար (մօտ 40 փութ) գարի հանեց: Սակայն, դեռ գարու փոթիլը նոր էր քամել, երբ պարտատէրերից մինը ջուալն ուսին գզրի հետ միասին կանգնեց այրու գլխին և լիուլի չափելով, տարաւ իւր փողի շահի տոկոսների տոկոսը:

Անդօր Սարգիսը, եթէ ընդդիմանալ էլ կարողանար, էլի չէր ցանկանում, որովհետև ասում էր. «գլուխն 'ի քարը, թող մի խան էլ աւել տանի, միայն ժանգ ու ժէն չանի՝ ուշունց

չտայ խեղճ ու նաչար մարդիս չորացած կարկժին»...

Այն օրից անցաւ տասից տասնուհինգ օր, բայց Սիմոն վարժապետն էլ չերևաց Կ. գիւղում. պատճառը շատ տխուր էր. նա իւր արդէն բաց դպրոցի մասին թուղթ էր ստացել, որ... պիտի փակեն յունուարին...

—Տղերք, վարժապետը չէնի՞ թէ հիւանդացաւ, էս խի՞ չի էրևաց,—յիշեց մէկը:

—Էլ չի էրևալ,—տխրութամբ ասաց մի ուրիշը:

—Ընչի՞:

—Ամակը ջուրն են գցել, ինչի՞:

—Ո՞նց թէ...

—Յուսումարանը փակում են, վերևիցը խաբար ա եկել:

—Ո՞րտեղից:

—Վերևիցը...

—Վա՜յ... թու՛ հա՜...

—Խեղճ վարժապետ, իրանն էլ փակում են, նա հլէ մերի դարդն էր քաշում, որ գայ, բաց անի:

—Դրուստ ա, որտեղ պատահում էր ինձ, մի գլուխ հէնց էն էր միւննալթ անում, որ գեղովի աշխատենք, մի չինութին չինենք յուսումնարանի համար: Խեղճը լաւ էր կպել, ամա՜...

չուզողի տունը քանդուի, խափանեց բանը...

—Մենակ մեր բանը խափանեց. խեղճը մնալու ա առանց ղունլուղի (ծառայութեան):

—Մնալ չի, անպատճառ տէրտէր կդառնայ:

—Օ՛հ, էրնաք չի ըլիլ, որ դառնայ ու գայ մեր գեղը:

—Հէ՛, մթամ իրենց գեղացիք բաց կթողան. հէնց սիրում են, ոնց որ իրանց աչքի լիսը:

—Բա ինչ կանեն. բաս սիրիլ չեն էնթավուր հոգուն. տեսաք, ինչպէս քարոզեց, ինչպէս խղճաց Սարգիսի վրայ. ուզիլ չէք, որ էնդայդի մի խղճմտանքով ու հասկացող էրէց էլ մենք ունենանք:

—Հա՜, ես ու իմ Աստծը. թամամ Աստած դառաւ էլի, խեղճ որբերու համար:

—Տղերք, որբերի ասեցիք, միտս ընկաւ. բա դուք ըրմանում չէք, որ աչքից մաղ քաշող Գիգինի տղէն էսքան համբերում ա:

—Ինչի համար:

—Ախր փողի շահիցը մնացած գարին առնում չի, է, եթիմներիցը:

—Բալքի սիրտը խնամք ա ընկել:

—Ղորթ. էս ոնց ա, էս որ խաչիցն ա, որ սուս ա կացել:

—Վալլահ, մենք հէնց դրան էինք դահրում, թէ անօրէն ջհուդ ա. տեսաք Ենթռէխի տղին,

ոսկի թողեց էլ ոչ, թէ խեղճը գարին քամի, դարմանիցը հանի. ձեռաց գնաց ու հոգիաւի պէս զլխին կաղնեց:

—Ես իմ Աստծն, Արթին ապի, Գիգնի տղէն եթէ որ գարին բախշի, մենք ջլիս կըրմանանք, հիւշ ու մաթ կմնաք:

—Ընչի էք մաթ մնում, խի, նա հողեղէն չի. բալքի սիրտը թրահմ ա ընկել:

—Էհ... ոչ հաւատամ սուտ Քրիստոսին: Հա, եթէ Սիմօն վարժապետի քարոզները բեալլումը մտած ըլեն, էդ գիտամ ոչ, թէ չէ, նա մի բուռը գարու համար իր հօրը գերեզմանիցը հանող մարդ ա,—վճռապէս նկատեց մէկը:

Ստացուած գարին թէպէտև հինգ-վեց ամիս թուով էլ հինգ-վեց որբերին հաղիւ պիտի բաւականանար, թէպէտև հատնելուց վերջն էլ դարձեալ մուրացկանութիւն էր սպասում նրանց, սակայն այրին զոնէ մի առժամանակ շունչ պիտի քաշէր հացի պակասութեան վրայ մտածելուց: Երեխաներն այլևս չէին սգում հացի համար: Ուտում էին գարին ու զռներին խաղում, թէպէտ էլի մերկ էին նրանք ու մինները բաց:

Սարգիսը, ճախարակը կողքին ու սանդերքն առաջին, ամբողջ օրը դրանը ծառի տակ կամ գղում, մանում էր սրա նրա համար և

կամ ասեղը պտղնցումը հուզ տուած արխա-
լուկներ ու չուխաներ էր կարում, քղում, որպէս
զի մի քանի կոպէկ ժողովելով, թէ նրանց և
թէ իւր մերկութիւնը ծածկի. իսկ երբ մըթ-
նում էր, ահից ու երկիւղից խեղճը ներս էր
ժողովում ամեն ինչ և պինդ փակելով «Գոր-
տան բնի» դուռը, պատսպարւում էր այնտեղ, ուր
դեռ շատ և շատ փորձանք էր սպասում նրան։

Ե

Մի երեկոյ բացի լուսնի խաւարումից, եր-
կինքի այնքան բազմաթիւ ու պայծառ աստ-
ղերն ևս, հորիզոնի շուրջը վաղուց դէզ-դէզ
եղած ամպերը երեսներին քաշելով սև սաւանի
պէս, այրու գիշերը այնքան մթին, այնքան
ակնակուր էին դարձրել, որ մարդ շարժուելիս
կարծում էր, թէ աչքերը կապած է ման գալիս։
Ակնակրի մէջ այրին նոր ննջելու ժամանակ
առաջին անգամ մի խուլ և կասկածաւոր խըշ-
տոց էր լսել դուրսը։ Ուստի առուտաղ եղած ա-
կանջ դնելով, սպասում էր, թէ ինչ պիտի լի-
նի այն խշտացնողը։

Խշտոցը մի քանի վայրկեան դադարելուց
յետոյ, նորից կրկնուեց։

—Ա՜. սա ատուկ թուրը պտի ըլի,—ծի-
ծը մանկան բերանից խլելով, երկիւղածու-
թեամբ գլուխը վեր քաշեց տեղից և ինքն իրեն
հարցրեց։

—Լա՜ւ. էս խու երկնքին էլ ա յայտնի գի-
տնքին էլ, որ կոկալմս հինգ թաղարուկէս գա-
ռուց ու մի կոծկած դորակից սավահի ուրիշ
ոնչիչ չունիմ. ախր ով որ ա, անիրաւն ուր
ա գալի, միտքն ինչ ա,—կրկնում էր նա,
փոքր ինչ չունչն իրեն քաշելով ականջ դնում
դողդողալէն, և նորից չչնջում շփոթուած։

—Ա՜խ, տէր իմ Աստուած, եարաբ էս ինչ
բան ա, գազան ա՛, թէ մարդ, որ գալիս ա,
գալիս, սուս կենում, խշտացնում, ծէնը կտրում
ու էլի խշտացնում...։ Չէ, ով, ինչ էլ որ լինի,
խարսը տալով ա գալի հալբաթ, որ դուռս
կոտրի ու ներս մտնի։ Ա՜խ, ինչ անեմ, Աստ-
ուած. թէ տեղիցս ժաժ գամ, դուռը կամաց
բաց անեմ ու դնամ հարայ տամ, վայ թէ ին-
սանաթ չլնի ու, ես զրաղ ըլելուց ետը, գայ
էրեխանցէս մնին ետ էրկսին առնի ու փախ-
չի։ Հը՞, մարդ կլնի, թէ քաւթառքուսի (մար-
դագէլ)....

Երկիւղը հետզհետէ և՛ զօրանում էր Սար-

գիւլի սրտում և միևնոյն ժամանակ, կարծես, բաջացնում նրան խելագարի բաջութեամբ։

—Հէ, տեղիցս ամենևին ժաժ չեմ գալ. թող, ինչ որ գրած ա ճակատիս, հալբաթ ընէլ պէտք ա քաշեմ։ Էս հա դուռս ա հասնում. թէ կուզէ գազան ըլի, թէ կուզէ մարդաշուն, էլ մտիկ չեմ անելու, կռուիլ պտեմ. հօ թողալու չեմ, որ նամուսս ծախուի ու անրմս կոտրուի սաղ գեղի մէջ....

Վճռականապէս ասաց Սարգիւլը և երկիւղից արիացած՝ մի փայտ ձեռքը գցելով, կանգնեց դրան յետևը և սպասեց մօտեցող վտանգի հետ մարտնչելու։

Խորամանկ եկողը մի առ ժամանակ լռել էր դուրսը և անշարժ կանգնել։ Այրին այլևս ձայն, շունչ չէր լսում։ Նա սկսեց կասկածել։

—Անպատճառ էն անիրաւ չան տղէն էր. հալբաթ շնութենի էր գալիս, հալբաթ տեսաւ գլխի եմ ընկել, եդ դառաւ ու կորաւ։ Հա, անպատճառ նա էր, նա, որ հլա մարդիս կենդանի վախտն էլ էր ուզում անրմս խայտառակ անի,—ձայնի, շիկոցի ու խշտոցի ընդհատուելուց այրին առժամանակ խաղաղուեց, որի բարախումը դադարեց. միայն, փայտը ձեռին դեռ պատրաստի կանգնած էր։

Այդ միջոցին թշնամին գողի քայլուածքով

մօտեցաւ դրանը, ձեռքի լծակը դրան տակը ձգեց, կրնկահան արաւ դուռը և հէնց ուզում էր ներս ընկնել ու մթութեան մէջ կոխ տալ որբերին, Սարգիւլն այնպիսի աղեկտուր ճիչ արձակեց, որ կարծես թէ թունաւոր օձերը յանկարծ ծոցը թափուեցին։

—Անամօթ, անաստուած ու անհոգի, կոկալս որ անտէր ես տեսնում, բա նամուսը՞ս...

—Սո՛ւս. Սարգիւլ, սո՛ւս, պարտքդ քեզ կը բախշեմ,—լսում էր մթութեան մէջ, դրան առաջ։

—Ասում եմ յետ դառ։

—Սարգիւլ...—աղաչում էր նա մտերմանալ աշխատելով։

—Ե՛դ դառ, անիրաւ, թէ չէ ճակատդ քալակի նման մէջ տեղիցը փեղք կանեմ էս սըհաթին։

—Սարգիւլ, անդաճ կալ ինձ. քեզ հըմար մի դերիայ էլ կառնեմ, մի շալ էլ։ Սո՛ւս, էր կուսս էլ բիարուռ կընենք գեղի մէջ. լաւն էն ա, որ զարուլ կենաս...,—աղաչում, կրկնում էր նորից։

—Ձնութենի եկած չունն. այ քեզ կամաց խօսալն ու դերիան,—սիրտը պատռելու չափ աղաղակեց բարոյական այրին, ձեռքի փայտը պտտեց ու շրջիկալէ վրա բերեց և՝, տուր թէ

կտաս Գիգնի տղի գլխին, որը շփոթուած անսպասելի հարուածից, ետ փախաւ։

Այդ միջոցին գիւղից արթնացողների դռներից ձայներ լսուեցին և ոմանք նրանցից արդէն օգնութեան էին գալիս, իսկ հաստատմամին Գիգնի տղէն, քոռ ու քաւթառ արջի նման, ապառաժուտների բեկորները վրելով ու խռխռացնելով, գլորուող կոճղի նման իրեն արդէն բաց էր թողել դէպի ներքի ձորը, ուր և անյայտացաւ խաւարի մէջ։

Ձները ոռնում էին։

Հարան արդէն ընկել էր գիւղը. վշտալի այրին իւր կանացի սրբութիւնը պաշտպանելով, վերևից քարեր էր գլորում անբարոյականի ետևից, իսկ երեխաներն արթնացած՝ երկիւղից դողդողալով, խրճթի պատերի տակ ճչում էին սարսափահար եղած։

—Գնա՛, անիրաւ խուլաբասան, հալբաթ մի սև օր էլ քու կնիկն իմ օրին կհասնի Աստծով... Արջ Գիգնի տղի ետևից ալաղակում էր այրին, որ շտապով յետ դառնալով, սկսեց սիրտ տալ երեխաներին, թէպէտ նրանք այնուամենայնիւ քնահարամ եղած, երկիւղած աչքերով շարունակ նայելով իրենց մօրը, օճորքին ու շէմքի մթութեանը, հարցնում էին նրան.

—Նանի՛ ջան, էն ով էր. գող էր, Նանի

ջան, թէ գէլ Է՛լի կգա՞։ Նանի, արի իմ կուշտը, վախում եմ...

Այսպէս անցկացրին մինչև լուսանալը։

Զ

—Ախպէր, գիշերս էն խեղճ որբերուն էն ինց անիրաւն էր, որ նըհէ նեղացնում էր, բա չիմացա՞ք.....

Լուսաբացին իրար պատահող գիւղացիք հարցնում էին միմեանց, թէպէտև ամենքն էլ գիտէին, որ այրու դուռը փեղքահան անողն անպատճառ Գիգնի տղէն էր։ Գիտէին, որ վերջինս մի քանի տարի քաղաքներում դաշ զալով, հմտացել էր գիշերնուկութեան արհեստի մէջ աւելի, քան թէ մի որևէ շնորք էր ստացել այնտեղ։

Կիրակի առաւօտեան, այրին, փոխանակ ուրիշ բաղդաւոր կանանց նման խաղաղ սրտով ժամ գնալու, աղօթելու, սևասրտած, վշտերին մի նոր վիշտ էլ աւելացած, գիւղի նոյնպիսի անբարոյական տանուտէրին գանգատ գնաց։

Գիւղական դատարանի գլիրը, որ տանու-

տէրի առաջ, ճիպոտը ձեռին, միշտ սատանի պոչի նման ցցուած էր լինում ու ջրիպիպիպ ծտի պոչի նման տմբտմբում, այրուն նկատելուն պէս մրթմրթաց.

—Ըհը՞ն, հրէ էլի լակոտնին հրաքաշ գալիս ա։

Այնուհետև ամենքը նայում էին դէպի այրին։

Այրին մերկ մանուկը հուպ տուած գրկում, գլխի պատռտուած փալասով երեսը ծածկած կիսով չափ, ամօթխածութիւնից հալ ու մաշ լինելով, մօտեցաւ դատաւորներին, կանգնեց տանուտէրի առաջ, և չխօսքանութեան պատճառով էլի մի պատանու բերանով արտասուահեղձ ձայնով արաւ իւր դառը դանդատը։ Բայց դեռ չվերջացրած խօսքը, տանուտէրը հեգնարար հարցրեց թարգման պատանուն։

—Ա՛ տղայ, էդ ինչ ա փնթփնթում էդ որբերին, ինչ ա ուզում էլի. գահրումար գարիքը խու հնձուեցին...

—Տանուտէր, ասում ա՝ դիշերւաս կիսին Գիգինի տղէն եկաւ մեզ սրտաճաք արաւ...

—Սրտաճաքը ոն ա, աղճի,—ժպտալով ու աչքով անելով, հարցրեց նա։

—Ասում ա՝ եկաւ, որ... կոկալս մտնի...

—Եռոյ. հըմի ինչ ա կամենում, ինչ ա ուզում,—էլի հեգնօրէն հարցրեց նա։

—Ասա, գլխովդ պտիտ գամ, ուզում ա, որ կանչէք դիւան անէք։

—Լաւ. որ ուզում ա, կկանչեմ, միան, եթէ կարենայ ոչ հաստատի, իրան խիստ կպատըճեմ։ Արա, Թոմաս, գնա Գիգինի տղին կանչիր. ասա տանուտէրը քեզ վառազ ուզում ա,—հրամայեց գզրին և ժպտալով գառնալով այրուն, հարցրեց.—«ապճի, ճնանչեցիր, նա էր դուռդ փերթատան անողը»։ Այրին գըլխով արաւ։

Գզիրը մի քանի բոպէից յետոյ բերեց և ներկայացրեց մեղադրուողին։ Գիգնի տղէն հեռուից խէթ-խէթ նայելով այրուն, եկաւ մօտեցաւ տանուտէրին և իրեն այնպիսի դիրք տուեց, որ կարծես թէ բոլորովին անմեղ տեղից զրպարտելիս լինէր. և իբրև նեղացած, բարկացած և վիրաւորուած, հարցրեց։

—Պարոն տանուտէր, ինձ ինչի համար էք կանչել։

Տանուտէրը մտերմական հայեացքով և խորամանկ ժպիտով նայելով նրա մեղաւորութիւնը թագցնող աչքերին, սկսեց հարց ու փորձ անել։

—Ա՛, Սէրոբ աղայ, քշերիս խի՞ ես գնացել էդ հարսի կոկալը մտել. ինչ շունդ էր կատաղել ընտեղ, որ հըմի շառուշուռի մէջ ես ընկ-

նում։ Գիտում չիր, որ որբերու շառուշիլթախն անպակաս կլնի։

—Վահ. վա՛, դրուստ որ շառ ու շիլթախ։ Ի՞նչ կոկալ, ի՞նչ մոկալ։ Դրա կոկալն ըսկի գորտըն էլ չի սիրտ անում, որ մտնի, էնպէս հոտած ա, ես ի՞նչ ունեմ էնտեղ։

—Ես էլ գիտամ, որ դու լայեաղ չէիր անիլ, միայն հսկանում չեմ, թէ շառով տալու պատճառն ինչ ա։

—Ասեմ պատճառը։ Պատճառն էն ա, որ դա ինձ մի քանի խան գարի ա պարտ. մի իրիկու գնացի պահանջեցի, չուզեց. որ տայ, հըմի շառով ա տալի հալբաթ, որ գարիս չառնեմ։

—Հա՛. լաւ, հսկացայ։ Աղճի, ա՛ անզգամ, բա հմանչըմ չե՞ս. մարդը եկել, մարդավարի քեզանից իրան առնելիքն ուզել ա, հըմի դու եկել ես, թէ՝ կոկալս մտա՛։ Դէ կորի. կորի, լակոտներդ քաշի, կորիր էստեղից. անզգամ...

—Չէ, տանուտէր, ես դրանով պաւական չեմ. երբ որ էդպէս ա՛, պէտք ա հրամայես, որ, առաջինը՝ գարիս տայ էսըհաթին, վրա էրկուսն էլ՝ պէտք ա սուտ խօսալու, շառով տալու համար ես շարա՛փ տայ, ես մի օր դալա նստի,—պահանջեց Գիգնի տղէն։

—Շատ լաւ, էդ էլ եկող կիրակի կա-

նենք, թող էս անգամ գնայ, կորչի,—պատասխանեց տանուտէրը և թղթերը շուռ ու մուռ տալով, անցաւ աւելի իւղոտ վէճերին ու բողոքներին։ Իսկ, թէև անհամարձակ, բայց այրին պահանջում էր, որ Գիգնի տղի գլխարկն վեր առնեն գլխիցը և տեսնեն, թէ գլխին հասցրած վէրքն ինչպէս է հաստատում իւր արդար բողոքը։

—Կորիր, անարո՛ւռ, լաչառ, անզգամ, թէ չէ, վեր կկենամ էս սաղ գեղի էնլիգը վրէդ թամաշա կբերեմ։ Արա, տա՛ր, վզակոթին տալով հեռացրու էստեղից,—տանուտէրը հերսոտելով, հրամայեց գզրին, թէև Գիգնի տղէն այրու պահանջից կարմրատակել էր բոլորովին և լռել։

—Տղե՛ր, լսել էք, որ ասել են, թէ կաշառը մութը տեղը լիս ա տալիս. Գիգինի տղիցը զա՛տ ա կուլ տուել, ա՛յ,—իրար աչքով անելով, ցածրաձայն նկատում էին այս և այն կողմից։

—Անպատճառ...

Սառնասրտութեամբ վկայում էր ժողովուրդը, իսկ անարգուած այրուն կոպտաբար հրելով գզիրը, հեռացնում էր Մ՝ռռացուած աչ-

Վ Ե Ր Ջ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*Ս.Ս.Հ.Հ. Центральная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Абовян на
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ*

«Ազգային գրադարան»
NL0348922

41160

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԵՐԻՆՍ ԼՈՍՍ ԵՆ ՑԵՍՍԼ ԵՒ ՎԱՃՈՒԹԻՒՆ ԵՆ.

	Ռ.	Կ.
1. Մոռացուած Աշխարհ գիրք Ա. . .	—	60
2. Մոռացուած Աշխարհ գիրք Բ. . .	—	50
3. Մոռացուած Աշխարհ գիրք Գ. . .	—	40
4. Աղա ս. Սարգիս գիրք Ա. . . .	—	15
5. Աղքատի Հալը	—	25
6. Գիւղի այրին	—	15

ՏՊԱԳՐՈՒԹԵՆՆ ՀՐԱՄԱՐ ՊՈՏՐԱՍՏ ԵՆ

1. Մոռացուած Աշխարհ գիրք Դ.
2. Մոռացուած Աշխարհ գիրք Ե.
3. Շիրինանց Նախշունը
4. Անվէղար վարդապետը
5. Ս. Սարգիս (պատմական)
6. Աղքատի խաչը
7. Կարկուտը գիւղում
8. Աղքատի ձմեռը
9. Ուստա Գէոն եւ նրա համբեարը։

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Հարիւրով գնողներին 25% զիջումն։

Գիմել—Թիֆլիս, Միրզայէլեան փողոց, Կուկիոյ ս. Ատուա-ծածին (Թանդոյեան) եկեղեցու մօտեան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ ՃՈՒՂՈՒԹԻՒՆՑԻՍ։

891.99
Հ-97